



ՀԱՄԱԾԻԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԾԻԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ



ամաշխարհային Հայկական Քոնկրեսը, իր վերջին նիստի մեջ, մայիսի 3-ին, բանաձևով մը պահանջեց Ուիլսոնի սահմանագծած հողամասը միացնել Սովետական Հայաստանին: Բանաձևն ընդունվեցավ միաձայնությամբ և հոտնկայս երկարատև ծափահարություններով և օվսանաններով:

Այնուհետև Քոնկրեսը լսեց աշխարհի բոլոր հայերու դիմումագրերը Միացյալ Ազգերուն: Այդ դիմումագրով, Համաշխարհային Հայկական Քոնկրեսը, հանուն աշխարհի բոլոր հայերուն կհռաջագրեր — Հայոց հողային պահանջը դնել Միացյալ Ազգերու օրակարգի վրա և արդար ու կորովի վճռով մը Ուիլսոնի սահմանագծած երկրամասը վերադարձնել իր օրինավոր տիրոջ — ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ:

Քոնկրեսը միաձայնությամբ նաև որոշեց, որ հատուկ հանձնաժողով մը այս դիմումը ներկայցնե Միացյալ Ազգերուն:

Ուրբաթ օրվա նիստով Քոնկրեսը միաձայնությամբ քվեարկեց ի նպաստ ներգաղթի կատարել հինգ միլիոն տուրքի հանգանակություն մը մինչև 1950 թ., որմե մեկ միլիոնը գույացնել 1947-ին, ինչպես նաև ջանալ Ամերիկային և Եվրոպական արդյունաբերական երկրներին կատարել կադմակերպված ներգաղթ, այսինքն կարելի եղածին չափ շատ թվով ներգաղթողներ կադմակերպել արտադրական արտելներու մեջ:

Հետևյալը նիստերու համառոտ տեղեկանքն է. —

Համաշխարհային Հայկական Քոնկրեսը բացվեցավ փարթամ ճաշկերույթով մը Ուոլտոթ Աստորիայի աստեղաշող դահլիճին մեջ: Պատվո սեղանի վերև կախված էր նկարիչ Զավեն Մելիքի պատրաստած հիանալի ցուցատախտակը, որ կպատկերացներ

նախագահ Ուիլսոնը մատնանշելով իր սահմանագծած երկրամասը և պահանջելով. — Ազատագրեցեք շղթայված այս երկրամասը և դարձուցեք Հայկական Սովետական Հանրապետություն:

Ճաշկերույթը բացվեցավ Առաջնորդ Սըրբազանի օրհնությամբ և ապա Ազգային Խորհրդի ատենապետն արտասանեց իր բարիգալստյան ճառը 700 պատգամավորներուն և հանձնեց սեղանը փրոֆ. Հ. Տատուրյանին: Խոսեցան Տ. Տիրան Եպիսկոպոսը, Մերակուտական Չարլզ Թոպին, ռատիո վերժանող Ռեյմոնտ Ռալլը, և արտասահմանյան պատգամավորներին Ռումանահայության ներկայացուցիչ և Հայաստանյան Ճակատի թերթի խիզախ խմբագիր Հարություն Պապոյանը, Արժանթինի ներկայացուցիչ Մուշեղ Արխանյանը, Չինաստանի ներկայացուցիչ Հայկ Ասատուրյանը, դարձյալ Արժանթինյան Արահամ Էլմեդյանը, Սուրիայի ներկայացուցիչ Գեորգ Պապայանը և ուրիշներ: Խոսեցավ նաև ղորավար Հայկ Շեքերճյան, որ իր անգլերեն ճառը վերջացնելով, հայերեն մի քանի խոսքով ըսավ, թե թեև լեզուս տկար է, բայց սրտով զորավոր հայ եմ:

Համբավավոր հրդեհ իվան Փեթրով, Սան Ֆրանսիսկոյի օփերայի խումբեն և տաղանդավոր երգչուհի էլիզ Գապուլյանը իրենց երգերով գեղարվեստական բացառիկ վալսը մը տվին ճաշկերույթին մասնակցող ավելի քան 1200 ներկաներուն, ստեղծելով ոգևորություն:

Ճաշկերույթը փակվեցավ Պատվելի Արսեն Կեռրիզյանի աղոթքով:

Հինգշաբթի օրը գումարվեցավ Համաշխարհային Հայկական Քոնկրեսը: Ընտրվեցավ 8 հոգինոց Ատենապետություն մը հետևյալ կերպով. — Տոքատոր Մովսիկյան, Նըշան Շահինյան, Պատրիկ Սեւյան, Եղիա Սիրվարդ, Արմեն Միրիճանյան, Գրիգոր

Տեր - Գրիգորյան, Տիգրան Պոյաճյան և Գառնիկ Սողաթյան:

Իրարու հաջորդող բացման ճառեր արտասանեցին Քոնկրետի կազմակերպման Հանձնարարի ատենապետ Արմեն Միրիճանյան, Քալիֆորնիայի Առաջնորդական Տեղապահ Տ. Վարդան Նպիսկոպոս, Վերապատվելի Անդրանիկ Պետրիկյան և տոբո. Մովսիսյան: Երկրորդ նիստին Քոնկրետը զբաղեցավ ներգաղթի հարցով, և քննարկել շարունակվեցավ ուրբաթ օրվա նիստի մեջ ևս: Ուրբաթ օրվա նիստերու ընթացքին Քոնկրետը լսեց զեկույցներ նաև Սովետական Հայաստանի հետ մշակույթային կապի ամրացման և հայերու իրենց ապրած երկիրներուն ըրած ծառայությանց մասին:

Շաբաթ օրվա վերջին երկու նիստերը գումարվեցան Կարողներու Արհեստակցական Միության Լոբը 91-ի ընդարձակ դահլիճին մեջ և լայնորեն զբաղեցան Հայոց հողային պահանջներով:

Վերջին նիստի հուսկ բանն արտասանեց Տ. Հմայակ վարդապետ Ինթոյան և Քոնկրետը վերջացավ Տ. Վարդան Նպիսկոպոսի «օրհնեալ եղերություն»:

Համաշխարհային Հայկական Քոնկրետը փակվեցավ մեծահանդես նիստով մը աշխարհահռչակ Քարնեկի Լոլին մեջ:

Կնախագահեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայան, որ ժողովը բացավ հաղորդելով Հայրապետական օրհնությունը և կարդաց Ամենայն Հայոց Հայրապետի հեռագիրը, զոր երեք հազարի հասնող բազմությունը ունկնդրեց ակնածանքով և հոտնկայա ու ողջունեց օլխանաններով: Հոտնկայա ունկնդրվեցան նաև Սովետական Հայաստանի Նախագահ Մացակ Պապյանի և Վարդապետ Սահակ Կարապետյանի ողջունի հեռագիրները, որոնք խանդավառության և բերկրանքի նոր առիթներ հանդիսացան:

Կատենապետեր պր. Նշան Շահինյան: Խոսեցան Հալ, Իրավանց Պաշտպան Եկեղեցական Հանձնախումբի ատենապետ տոբո. Սըր, Ավետիս Տերունյան (Ճան Ռոյ Քարտըն), գնդապետ Սարգիս Զարդարյան:

Հաղարտակետ Գարտաշյան, Ամերիկյան Բանակին, կարդաց Քեիթըն Ճեյմս Չանգալյանի ուղերձը, զոր ան գրած էր իր հիվանդության անկողնեն: Խոսեցավ և հանգանակությունը վարեց ակնաւորոս ատիոս վերձանող տոբո. Յրենք Քինկտըն: Հանգանակությունեն գոյացավ ավելի քան 35 հազար տոլար:

Հանգուցյալ Նախագահ Ռիլսընի դուստրը՝ տիկին Էլինոր Մք Ատուի երեւումը բեմին վրա, ինչպես և անոր ելույթը, ստեղծեցին փոթորկող և անվերջանալի ծափահարություններ: Երեք առիթներով հանդիսականները իրենց հարգանքը մատուցին Մեծ Հայաստրի դատեր և սրահը կթնդար ու կրդըրդար ծափերով ամեն անգամ որ Ռոտրո Ռիլսընի անունը կարվեր:

Պր. Տիգրան Պոյաճյան ներկայացուց Քոնկրետի որդեգրած դիմումը Միացյալ Ազգերուն, զոր հանդիսականները ողջունեցին ընդհատվող օլխանաններով և ընդունեցին հոտնկայա:

Տ. Կարապետ քհն. Գալֆայան, Եղեմեն, կարդաց Ամենայն Հայոց Հայրապետին և Մացակ Պապյանին ու Սահակ Կարապետյանին ուղղված հեռագիրները:

Գեղարվեստական բաժինը հիանալի կերպով տարավ տիկին Ռոդ Ջուլյան, որ նըվաճեց ներկաներուն սրտերը և հայրենասիրության կրակը ալ ավելի բորբոքեց անոնց մեջ:

Քոնկրետը հեռագրով մը իր շնորհակալությունը հայտնեց Միացյալ Նահանգներու Պետական Բաժանմունքին, Համաշխարհային Հայկական Քոնկրետի գումարման համար անոր տված օժանդակության և դյուրություններուն համար:

Քոնկրետը նաև հեռագրով մը Նախագահ Թրոմենին դիմեց, խնդրելով իրագործել իր մեծ նախորդին կտակը, Միացյալ Ազգերուն մեջ ուժ տալով Ռիլսընի սահմանադրած երկրամասի միացման Սովետական Հայաստանին:

Ժողովը փակեց Միջին Արեւմուտքի Առաջնորդական Տեղապահ Տ. Սիոն Նպիսկոպոս Մանուկյան:

(«Լուսեր» քիվ 124, 1947 թ.)

ՀԱՍՏԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱՆ

ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՌԱՏԻՈՅԻ ՄԵՋ

Ռբբան այ ամերիկյան մամուլը սկիզբը հայտնաբերեց պախարակելի անտարբերություն դեպի Համաշխարհային Հայկական Քոնկրետը, հետագային այդ անտարբերու-

թյունը տեղի տվավ որոշ հետաքրքրության: «Նյու Յորք Թայմզ» իր մալիսի 3-ի թիվով նկատելի տեղ տվավ Քոնկրետի ուրբաթ օրվա նիստերու և ըսավ թե Համահայկական Հա-

վաթի գլխավոր նպատակն է Հայոց հողային պահանջը դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրա, առաջադրելով Թուրքիոյ բռնագրաված հողերու միացումը Հայկական Սովետական Հանրապետության: Թերթը նույնպես որոշ տեղ տվավ Քարենկի Հովին մեջ մայիս 4-ին գումարված հանդիսավոր նիստին:

«Նյու Յորք Հերալդ Թրիբյուն» իր մայիս 5-ի թիվին մեջ երկու երրորդ սյունակ տեղ հատկացուցած էր Համաշխարհային Հայկական Քոնկրեսին: «Թրիբյուն» երևան կրեք, որ նախագահ Ռիլսը իր վճիռը հրատարակեց դեկտեմբեր 20, 1920-ին, Հայաստանի մեջ Հայկական Սովետական Հանրապետության հաստատումն հետո:

Ռուսական «Ռուսսքի Գոլոս» մեծ օրաթերթը հրատարակեց երեք հոգվածներ Հայկական Քոնկրեսի մասին:

Ռեյմերտ Ուալշ, մայիս 2-ին, ուրբաթ երեկոյան, իր ռատիոյաճը ամբողջապես նվիրեց քննարկելու Հայոց հողային պահանջը

և Թուրքիոյ լուծին տակ գտնվող հայ հողերու Սովետական Հայաստանին միացնելու պահանջին արդարացիությունը:

Նյու Յորք քաղաքի ռատիոկայանը, որ հարևան շատ մը նահանգներն ալ կլսվի, իր ունկնդիրները կանոնավոր կերպով տեղյակ պահեց Համաշխարհային Հայկական Քոնկրեսի ընթացքի և ընդունած որոշման մասին: Տրալբուս Ճեյ Զի ռատիոկայանը միշտ կհայտարարեր, թե որ Երկրներին ինչ պատգամավորներ կհասնին Նյու Յորք, կա կուարտիրա օղակայանը:

Հայկական Համաշխարհային Համաժողովի նախօրյակի երեկոյին Ուոլտորֆ Աստորիա պանդոկին մեջ սարքված ճաշկերույթին ներկա էր Եթովպիայի պատվիրակ պ. Սամվել Պեհիանելյան, որ անգլերեն ուղերձ մը ընելով՝ հայտնեց Նորին Վեհափառություն Հայր Սեւակի կայսեր խրատական պատգամը, որ խանդավառությամբ և ծափերով ընդունվեցավ:

«Լրաբեր»

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՍԸ ԴԵՊԻ ՀԱՅՏ ՓԱՐԳ

Մայիս 7-ին Համաշխարհային Հայկական Քոնկրեսի պատգամավորները, թիվով 109 հոգի, ծաղկեպսակ մը զետեղեցին Նախագահ Ֆրենքլին Տելանո Ռուզվելտի դամբանին վրա, Հայտ Փարթի անոր ծննդավայրին մեջ:

Դեպի Հայտ Փարթ Ֆրենքլին Տելանո Ռուզվելտի դամբարանը կատարված այս ուխտագնացությունը կկազմեր Համաշխարհային Հայկական Քոնկրեսի կարևոր գործունեություններէն մեկը:

Ուխտագնացները երեք լայրերով ճամբա ելան առավոտյան ժամը 10.30-ին: Ուխտագնացներու մեջ էին արտասահմանէն ժամանած պատգամավորները, գրեթէ քիչ բացառությամբ:

Օղբ անձրևոտ էր: Հակառակ այս իրողության, ուխտագնացները մինչև վերջ պահեցին իրենց բարձր տրամադրությունը:

Հասնելով Ռուզվելտներու նախկին կալվածք, որ այժմ արդեն դարձած է ազգային սեփականություն, առաջին իսկ ակնարկով կարելի էր տեսնել, թե Ֆրենքլին Տելանո Ռուզվելտի դամբանը, դղյակն ու գրադարանը դարձած են արդեն Միացյալ Նահանգներու ժողովրդին համար իրական ուխտատեղի:

Երբ կբալեինք դեպի դամբանը և կամ Բրեկիտինք դղյակի սենյակները կամ գրադարանին մեջ ցուցադրված նյութերը, բոլոր

պատգամավորները համակված էին վսեմ տխրությամբ և կայրերին մեծ նախազանի վերհիշումներով:

Պատգամավորները, բոլորն ալ գլխաբաց, անձրևի տակ ակնածանքով շարվեցան դամբարանէն տասը ոտք հեռավորության վրա, մինչ Եթովպիայի պատգամավոր պր. Պեհիանելյանը, բարձր բռնած Համաշխարհային Քոնկրեսի ծաղկեպսակը, առաջացավ դեպի դամբարանը: Անոր հետեցան Սուրիայի պատգամավոր պր. Գաբրիել Պարթյանը, Արժանթինի պատգամավոր պր. Արխանյանը, Լիբանանի պատգամավոր պր. Ջըռյանը և Տ. Կարապետ քհն. Գալֆայանը, ընկերակցությամբ սարկավազ Հովհաննես Երզնանցյանի և Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Կազմակերպական Հանձնախումբի քարտուղար Պետրոս Թերզյանի:

Կարճ ուղերձն մը հետո հայր Գալֆայանը մատուցց հոգեհանգստյան աղոթքը, որուն հաջորդեց «Ի Վերին Երուսաղեմ» երգեցողությունը և հոգեհանգստյան տպավորիչ արարողությունը վերջացավ Տեր Հոր պահպանիչով:

Իր կարճ ուղերձին մեջ Տ. Կարապետ քահանան ըսավ, թե Ֆ. Տ. Ռուզվելտը փոքր ազգերու իրավանց պաշտպանն էր և մենք, որ Համաշխարհային Հայկական Քոնկրեսին

եկած ենք Հայոց հողային պահանջները ներկայացնելու Միացյալ Ազգերուն, պարտական զգացիք մեր հարգանքի տուրքը մատուցանելու անիրավյալներու արտյանին և Միացյալ Ազգերու Հիմնադիրին:

Հուլիշ էր տեսնել այն տունը, ուր Ֆրենքլին Տելանո Ռուզվելտ ծնած, մեծցած և կյանքին մեծ մասը անցուցած էր: Հուլիշ էր մանավանդ տեսնել այն սեղանը, որուն առջև

նստած, Ռուզվելտը շատ անգամ ձայնարձակած էր իր Մտերմիկ Ջրույցները, նվիրված դեմոկրատիի և ժողովրդյան բարօրության: Այս սեղանին վրա դրված են շորս մեծերու մանրատիպ դրոշակները, որ ցույց կուտա թե Ռուզվելտ որքան խորապես կհավատար պատերազմի ատեն Չորս Մեծերու զինակցության և խաղաղության ատեն անոնց համագործակցության:

«Լրաբեր»

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԱՌԱՋԱՐԿԵ ԱԶՍԸՆԻՆ ՀԱՅՈՑ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՔԸ ԴՆԵԼ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԱՑ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Որքան ալ Տին Ալլսոնը հրաժարած էր Պետական Քարտուղարի Տեղակալի իր պաշտոնին, և հառաջիկա շաբաթին սկսած անոր պիտի հաջորդեր Ռապըրտ Լավելթը, պանքիր մը Ուոլ Սթրիթին, այնուամենայնիվ համաձայնած էր ընդունիլ Ամերիկահայ Ազգային Խորհուրդի պատգամավորությունը և ծանոթանալ Համաշխարհային Հայկական Քոնկրեստի Միացյալ Ազգերուն ուղղած դիմումագրի պարունակության հետ:

Այս տեսակցությունը կարգադրված էր միջնորդությամբ Գալիֆորնիայի Քոնկրեստին կերհարթի և մեր լավ բարեկամ ծերակուտական Չարլզ Քոպիի, որ մեկ տարվա մեջ երկու անգամ ուժեղ կերպով պաշտպանեց Ուիսքոնսին գծին դեպի արևելք տարածվող հողամասը Հայկական Սովետական Հանրապետության կցելու պահանջի իրավացիությունն ու արդարացիությունը:

Մայիս 12-ին, երկուշաբթի օր, կեսօրի հոգ ժամը երկուքին պատգամավորությունն արդեն կգտնվեր Պետական Պաշտոնատան սպասման սրահին մեջ, պատրաստ ներկայանալու Տին Ալլսոնին:

Պետական Պաշտոնատան հոյակերտ նոր շենքը, օժտված արդիական և հանգստավետությամբ բոլոր պայմաններով, կառուցված է եղեր որպես պաշտոնատուն Պատերազմական Նախարարության: Այդ է պատճառը, որ ամեն տեղ կտեսնվեր դրոշմված զինվորականության կնիքը:

Սպասման սրահի մուտքին դիմաց, պատին վրա կծավալի մարտական որմանկար մը, որ կհատկանշե Ամերիկյան Անկախության Պատերազմը, մեկը պատմության ամենաարդար և ամենահեղափոխական պատերազմներին: Այստեղ են սկզբնական դրոշակները հեղափոխական պայքարի մեջ իրարու միացած և արյամբ շաղախված ու նվիրագործված Ամերիկյան Նահանգներու Միությանը: Այստեղ է

նաև այն ամենատառչին դրոշակը, զոր ամերիկյան հեղափոխականները պարզեցին բրիտանական բռնադրավիչներու դեմ: Այդ դրոշակի կեդրոնը գրաված է ինքն իր վրա ուղղված վիշապը, օձը, որ պատրաստ է հարձակելու: Դրոշին վրա, վերև, գրված է.—ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՄԱՀ, իսկ ստորոտը՝ ՄԻ ԿՈՆԵՐ ՎՐԱՍ, ԿՀԱՐՎԱԾԵՄ:

Ոչ մեկ պատուհան ունի այս սպասման սրահն ու անոր հարակից օժանդակ դահլիճն ու նորանցքները: Անուղղակի լուսավորությամբ պայծառացած այս դահլիճը կարևոր արևով և օդի կենսաբար թարմությամբ ողողված ըլլար:

Մեր հասնելին քիչ հետո պատգամավորությունը մտավ Տին Ալլսոնի պաշտոնատեղին: Տեսակցությունը տեղեց մոտավորապես երեք քառորդ ժամ:

Պատգամավորությունը կրաղկանար հետևյալ անձնավորություններին.—

Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայան—Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչը Համաշխարհային Հայկական Քոնկրեստին մեջ:

Տ. Տիրան Եպիսկոպոս Ներսոյան—Առաջնորդ Հայոց Հյուսիսային Ամերիկայի:

Պատվիլի Ա. Ա. Կեորիկյան—քարտուղար Հայ Ավետարանական Միության:

Փրոֆեսոր Հարություն Տատուրյան—մեծանուն ամերիկյան գիտնականը, Հարթֆորդի Թրինիթի Քոլեճին:

Տոքատոր Հովհաննես Մովիկյան—հայտնի ազգային գործիչ:

Գնդապետ Սարգիս Զարդարյան—Մեծկուսակցի նահանգապետի զինվորական խորհրդատու:

Սերժ Պետոյան—ծանոթ առևտրական Գալիֆորնիային:

Պետրոս Թերզյան — Համաշխարհային

Հայկական Քոնկրետի Կազմակերպման Հանձնախոսների անդամներ:

Պատվելի Միհրան Բ. Գալստյան — քարտուղար նույն Հանձնախոսներին:

Պատգամավորությունը Տին Աշխարհին ներկայացուց Համաշխարհային Հայկական Քոնկրետի միաձայնությամբ ընդունած դիմումագրերը Միացյալ Ազգերուն, ինչպես նաև Ազգային Խորհուրդին Արտաքին Գործոց Նախարարներու Խորհուրդին մատուցած հուշագրի պատճենը, Պետական Պաշտոնատան ուղղված նամակով մը:

Համաշխարհային Հայկական Քոնկրետը իր դիմումին մեջ կոչ կընէ Միացյալ Ազգերուն՝ Հայոց հողային պահանջը դնել իր օրակարգին վրա և արդար ու կորովի մեծով մը. Ուիլսոնի սահմանագծած երկրամասը վերադարձնել իր օրինավոր տիրոջ — Հայկական Առյուծական Հանրապետության:

Արտաքին Գործոց Նախարարներուն տրո-

ված հուշագրով Ազգային Խորհուրդը անվարձ կհայտարարե մոտավորապես հետևյալը —

Հայ ժողովուրդը մեկ մարդու պես կպահանջէ Ուիլսոնյան Հայաստանը մոցնել Հայկական Սովետական Հանրապետության սահմաններուն մեջ:

Պետական Պաշտոնատան ուղղված իր նամակով Ազգային Խորհուրդի պատգամավորությունը, հանուն ամերիկյան քաղաքացի հայերու, կառաջարկե, որ Միացյալ Նահանգներու կառավարությունը, որպես Հայոց անվանդական բարեկամը, իր ազդեցությունը գործածե Հայոց հողային պահանջը դնելու Միացյալ Ազգերու օրակարգին վրա:

Աշխարհ լսելով նամակին բովանդակությունը զոր կարգաց Տ. Տիրան Եպիսկոպոսը և ընդունելով մեր դիմումագրի ու հուշագրի պատճենները, խոստացավ խնամքով ուսումնասիրել զանոնք:

«Լրաբեր»

ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲՈՆԱԳՐԱՎՎԱԾ ՀՈՂԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ՄԵՋԻ

Ճառ, ուղով Տ. Վարդան Եպիսկոպոս Գասպարյան, Քալիֆորնիո Հայոց Առաջնորդական Տեղապահը, բացավ Համաշխարհային Հայկական Քոնկրետը մայիսի 1-ին, հիմնադրքի առավոտուն

Հարգելի Ատենապետ,

Սրտակից և Հոգեկից Պատգամավորներ Հայկական Ազգային Համաժողովի:

Վեց-յոթ հազար տարիներու հնություն ունեցող և Աստուծո շունչով գրված Ս. Գրքին մեջ հիշատակված ջրհեղեղի պատմության մեջ հիշված է, որ ջրհեղեղի ատեն մինչև լեռները բարձրացած ջուրներուն վրա ծփացող Նոյի տապանը նստավ լեռան մը դագաթը, որ կկոչվեր Արարատ:

Աշխարհի սկիզբին ի վեր, Հայ ազգին սեփականությունը եղած է այս երկնամերձ լեռը, որ 18 հազար ոտք բարձրություն ունի: Այսպես հիշված ու վկայված է բոլոր ազգերու լեզուներով գրված պատմություններու և բառարաններու մեջ:

Այս լեռան դագաթը երբ կենսա ու դիտես չորս կողմերդ, Հայաստան աշխարհի տարածությունը միայն կտեսնես դեպի ամեն կողմ, որով Արարատը կխորհրդանշե Հայոց Հայրենիքը, որուն մեկ կետին վրա կար մարդկային առաջին զուգին հատկացված դրախտը, որոնց հետ Աստուծո խոսեցավ հայերեն լեզ-

վով, կըսե հայկական սիրուն ավանդությունը:

Մեր Հայրենիքին Արևելյան մասը այսօր ունինք մենք, որպես Հայկական ազատ պետություն, բայց արևմտյան մասը դեռ կմնա թուրքերուն ձեռքը, որոնք տեղահանությամբ ու ջարդերով ամայացնելով բռնի գրավեցին զանիկա:

Ամերիկայի երջանկահիշատակ Նախագահ Վուդրո Ուիլսոնն գծելով մեր Հայրենիքի սահմանները, մեզն ըլլալով բռնագրավված այդ մասերը, պահանջեց, որ անոնք վերադարձվին իրենց օրինավոր տիրոջ, Հայ ազգին, բայց այն պահի զինքը լսող չեղավ: Հիմակ երբ բարեկատես առիթը ներկայացած է, և աշխարհի մեծ պետությանց ներկայացուցիչները ժողովներ կզուամբեն ամեն ազգի Հայրենիքի սահմաններն ու իրավունքները ճշտելով ընդհանուր խաղաղություն հպատակելու համար, ես, որպես Առաջնորդական Տեղապահ Քալիֆորնիո Հայոց, այն-

տեղ ապրող 30 հազար հայերու անունով, որոնցմե շատեր այն տեղահանյալներեն վերապրողներ են, կենդանալով աշտեղ և իմ ձայնը միացնելով այս մեծ ժողովի ձայնին, կխնդրեմ ու կպահանջեմ արդարության և խաղաղության մեծ ժողովեն, որպեսզի թուրքերեն բռնագրավված մեր Հայրենիքի մասերը վերադարձվին մեզի, ուր կարողանան երթալ ու հաստատվիլ այն հարյուր հազարավոր հայերը, որոնք բռնի տեղահանվեցան անկից և կթափառին աշխարհի շորս կողմերը:

Մենք հոգևորականներս ինչու՞ կմասնակցինք այս համաժողովին, որ կըսվի թե քաղաքական բնույթ ունի: Մենք կարելի է քաղաքական կամ ղեկավորական խնդիրներու մասին շատ բան չենք դիտեր, բայց մենք ազգային խնդիրներու մասին լարված հետաքրքրություն ունինք և պատրաստ ենք պաշտպանելու անոր բոլոր շահերը, նույնիսկ մեր կյանքին գնովը: Այսպես ցույց կուտա մեզի մեր Ազգային Պատմությունը, որ զուգընթաց է մեր եկեղեցվո պատմության, սկսած Ղևոնդ Երեցի օրերեն մինչև ներսես Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ և ներկա Կաթողիկոսը՝ Գևորգ Զ:

«Մասունցի Դավիթ» հռչակավոր հրասայլի հաղթանակի ձեռնարկը հղացող Ազգընտիր Տեղակալի հրահանգին ընդ առաջ փութաց Հայ հոգևորականը՝ երկրագնդիս վրա ամեն տեղ:

Ներգաղթի ամենն կենսական շարժումին համար կատարված հանգանակության ձեռնածալ չի նստավ Հայ հոգևորականը, գործակցեցավ անոր բանիլ և գործով:

Հայաստանյայց եկեղեցվո գլուխ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջինը եղավ, որ պահանջեց քաղաքակիրթ աշխարհի մեծ պետություններեն ներկա Հայաստանի սահմաններեն դեռ դուրս մնացած, մեր թշնամի դրացիեն հափշտակված նահանգներու կցումը Երևանյան Հայաստանին: Եվ մենք այսօր հետևելով անոր հայրենասիրական ճշմարիտ արարքին կուգանք միացնելու մեր ձայնը Համազգային Համաժողովի ձայնին, դնելու համար մեր արդար դատը այն սեղանին վրա, որուն շուրջը կհավաքվեն աշխարհի մեծ պետությանց ներկայացուցիչները՝ արդարություն բաշխելու բոլոր անիրավված ազգերուն և խաղաղություն հաստատելու ամեն տեղ: Մեր նախահայր Հայկեն սկսած մինչև

այսօր հինգ հազար տարիներն ի վեր մեր պապենական հոգերն են եղած Մեծն Արարատը, Կարսն ու Արտահանը, Վասպուրականն ու Տիգրանակերտը, Կարինն ու հրաշալի Մամիկոնյաններու Տուրուբերանը: Եվ դեռ ուրիշ տեղեր, որոնք նշանակված են մեր ամենն մեծ ու ճշմարիտ բարեկամին՝ երջանկահիշատակ Վուստր Ուիլսոնի գծած Հայաստանի քարտեսին մեջ:

Այս Մեծ նախագահին արդարատես մտքին հղացք և անկաշառ ու անշահախնդիր մաքուր ձեռքերուն պատրաստած քարտեսով աշխարհին ներկայացված Հայաստանի մասերեն էր, որ մեր թշնամին այնքան անգթորեն վտարեց մեկ ու կես միլիոն հայեր, որոնք այնքան հավատարիմ և օգտակար հպատակներ եղած էին իրեն, և տիրացավ անոնց հոգերուն, տուններուն, եկեղեցիներուն, վանքերուն, խժժություններ գործեց անոնց մատղաշ ու շնոհալի զավակներուն, մտավորականներուն և եկեղեցականներուն վրա:

Այս հոգերուն կցումն է, որ կուգենք ներկա Սովետական Հայաստանին, ու այդ հոգերեն վտարված ու ջարդվածներեն վերապրող, աշխարհի վրա թափառական մեր քույրերն ու եղբայրները կուգենք, որ վերադառնան իրենց պապենական տունը, շնորհիվ Հայ կառավարության և Հայոց Հայրապետության ըրած իմաստուն կարողադրություններուն:

Երբ մենք եկեղեցվո մեջ կալոթենք, «Խաղավոր երկնավոր, զեկեղեցի քո անշարժ պահյա», քարն ու փայտն կառուցված եկեղեցվո շենքին համար չենք աղոթեր, հապա կենդանի եկեղեցիին՝ Հայ ժողովրդին համար: Եվ այս եկեղեցին՝ Հայ ժողովուրդը Հայաստանի մեջ միայն կրնա մնալ անշարժ, հաստատուն ու ապահով, Հայոց Պետության և Ամենայն Հայոց Հայրապետության հովանիին տակ:

Ամերիկայի նախագահները, կառավարությունը և ժողովուրդը միշտ բարյացակամ եղած են Հայաստանի և Հայ ժողովրդի հանդեպ: Ու մենք ալ միշտ երախտագիտական զգացումներ ունինք անոնց համար, և կաղոթենք, որ Աստուած պահե Ամերիկան՝ Աստուած պահե մեր Հայաստանը ու Սովետական Մեծ Աշխարհը և Աստուած պահե մանավանդ Ամերիկյան և Սովետական Միության հզոր բարեկամությունը:

«Երաբեր»

ԱՐՄԵՆ ՄԻՌՈՋԱՆՅԱՆ

ՊԻՏԻ ԶԱՐՏՈՆԵՆՔ ԵՐԲԵՔ, ՈՐ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄՈՌԱՑՎԻՆ

Հետևյալը բնագիրն է այն ուղերձին, զոր խոսեցավ Համաշխարհային Հայկական Փոնկրեսի Կազմակերպման Հանձնախումբի ատենապետ Արմեն Միրիմանյուն, Փոնկրեսի առաջին նիստի ընթացքին, մայիս 1, 1947 թ.

Պարոն Ատենապետ և հարգելի Պատգամավորներ,

Այս հանդիսավոր առիթով հոս հավաքված ենք բանալու համար Համաշխարհային Հայկական Փոնկրեսի առաջին նիստը:

Այս Փոնկրեսը իսկապես եզակի և աննախընթաց երևույթ մըն է սփյուռքի Հայոց պատմության մեջ: Սա առաջին անգամն է, որ Հայաստանն ղուրս, աշխարհի ամեն կողմերը բազմաթիվ փրկիրներու մեջ ցրված Հայկական գաղութներու ներկայացուցիչները քով քովի կուգան և կխորհրդակցին, Հայկական դատի արագ և արդար լուծման համար միջոցներ գտնելու մտադրությամբ: Սա առաջին անգամն է, որ այս տեսակ հավաք մը գումարել կարելի կըլլա, որովհետև հիմա միայն այս տեսակ հավաք մը կարելի դարձնող նախապայմաններ գոյություն ունին:

Իսկ այդ նախապայմաններու կարևորագույնն է այն իրողությունը, որ այժմ Հայ ժողովուրդն ունի իր պետությունը, հանձին Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, և թե հայ ժողովուրդը հասած է իր ամրակուտ հանգրվանը և ոտք դրած է իր բարօրության լայն պողոտային վրա, շնորհիվ այն հանգամանքին, որ Հայկական պետությունը իրավազոր և հավասար բաղկացուցիչ մեկ անգամն է Սովետական Սոցիալիստական Հանրապետությանց Միության և կվայելի այդ մեծ Միության պաշտպանությունն ու օժանդակությունը:

Ահա այս մեծ իրողությունը—Սովետական Հայաստանի գոյությունը և քառորդ դարու միջոցին կատարած հոյակապ վերելքը—նոր հույս և հավատք կենրնընդհանրապես ամեն անկյունը ապաստանած բոլոր հայրենասեր Հայոց մեջ, և զանոնք կզինեն պողպատյա վճռականությամբ մը, թե ժամանակը արդեն վաղուց հասած է, որ Հայոց արդար դատը լուծվի այն ձևով, որ բովանդակ հայ ժողովուրդը կպահանջի.—

Թրփական լուծին տակ տառապող Հայկական ճահնագները, և առանձնապես նախագահ Ուիլսոնի գծած սահմաններուն մեջ գտնվող Հայկական հողամասերը անմիջապես վերադարձնել Հայ ժողովրդին, զանոնք

մաս դարձնելով մեր ներկա Սովետական Հայաստանին:

Հայ ժողովուրդը միացած է այս պահանջին շուրջ: Ան խորապես համոզված է, որ Սովետական Հայաստանը բոլոր հայերու հայրենիքն է, անոնց վերջնական հանգրվանը: Սովետական Հայաստանի գոյությունը անհրաժեշտ է հայ ժողովրդի գոյության համար: Հայաստանը եթե դադրի Սովետական բոլոր ժողովուրդներու և առանձնապես Ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը վայելելն, կրկին պիտի դառնա փրկապական դիվանագիտության նենգավոր խաղերու խաղալիքը և հայ ժողովուրդը դարձյալ պիտի ենթարկվի իրավազրկման, թալանի, տեղահանության, ջարդի և ի վերջո բնաջնջման:

Ահա այդ պատճառով է, որ հայ ժողովուրդը անդրդվելի կմնա իր պահանջին վրա, որն է տակավին գերված Հայկական հողերու վերադարձը Սովետական Հայաստանին: Ան կմեծի և ետ կմղե այն բոլոր թելադրությունները, որոնց նպատակն է Հայկական հողային պահանջներուն համար տարբեր տեսակի «լուծում» մը առաջարկել: Ան լավ կհասկանա, թե իր պահանջածին դուրս ուրիշ ունեւակի «լուծում» կրնա միայն արեւտաբեր ըլլալ իր համար, որովհետև այդ անկասկածորեն պիտի առաջնորդե դեպի նորանոր արկածախնդրություններ, դեպի եղբայրասպան կոիվ և դեպի կործանում:

Իսկ շորս հովերուն ցրված պանդուխտ հայերը Սովետական Հայաստանի իրենց եղբայրներուն և քույրերուն ապահովությունն ու բարօրությունը տեսնելով, և նկատելով հայ ժողովրդի առջև բացված վերելքի հրաշափառ հեռանկարը, շեն ուզեր առնել ունե քայլ, որ կրնա վտանգել այդ ապահովությունն ու բարօրությունը և կրնա մթազնել մեր ազգի պայծառ ապագան: Ընդհակառակը, արտասահմանի հայերը կուզեն բերել իրենց ամենալայն և ջերմեռանդ աջակցությունը, որպեսզի պայծառ մնա այդ ապագան, և որպեսզի աստանդական Հայկական գաղութները վերադառնան իրենց տունները, վերադառնան Սո-

վետական Հայաստանը, որն իր մեջ պարունակեց պիտի Ուխտընյան սահմանները:

Հայ ժողովուրդը կպահանջե, որ դաշնակից պետությունները հարգեն և գործադրեն իրենց հանդիսավոր խոստումները, իրագործեն Սևրի դաշնագիրը, և ընթացք տան մեծ նախագահ Վուսրու Ուխտընի ցուցմունքներուն:

Հայ ժողովուրդը կժխտե Թուրքիոյ սահմաններու անձեռնմխելիության առաջադրությունը: Թրքական իշխանությունը հաստատված է ուրիշ ժողովուրդների բռնազավթած հողամասերու և իրավունքներու վրա: Թրքական սահմաններու անձեռնմխելիությունը կնշանակե տեականացնել թրքական լուծին հենթարկված ժողովուրդներու ստրկությունը: Աշխարհի ունե մասին մեջ տեական խաղաղություն կարելի չէ ունենալ, որքան ատեն որ օտարի լուծին ենթակա ստրուկ ժողովուրդներ կգտնվին: Մերձավոր Արևելքի մեջ տեական խաղաղություն կարելի չէ ունենալ, որքան ատեն որ թրքական լուծին ենթակա Հայկական հողամասեր կմնան, որքան ատեն որ հայ ժողովուրդը իր պատմական հայրենիքին մեջ չէ ամփոփված:

Թրքահայկական նահանգներու վերստացման հարցը, ուրեմն, Համաշխարհային Հայկական Քոնկրեսի գլխավոր նպատակն է: Այս Քոնկրեսի պարտականությունն է վերարծարծել Հայկական դատը, մոռացության անկունն անգամ մը ևս լույս աշխարհ բերել Թրքահայկական նահանգներու ազատագրման հարցը, աշխարհի հանրային կարծիքին դարձյալ ծանոթացնել Հայկական իրավունքներու դատը: Ավելի մասնավորապես կերպով այս Քոնկրեսի պարտականությունն է գտնել և գործադրել այն միջոցները, որոնց շնորհիվ Հայկական դատը դառնալու է Միացյալ Ազգաց օրակարգի հարց, հոն ստանալու համար իր արդար և արագ լուծումը:

Հայկական դատը Միացյալ Ազգաց ուշադրության հանձնելը արտասահմանի հայության գերագույն պարտականությունն է: Մենք հայերս պետք է որ առնենք այդ նախաքայլը, մենք հայերս պետք է որ ըլլանք մեր պահանջներու ամենեն անկուն և հավատացյալ ջատագովները: Մեր պահանջները վերահաստատելով, մենք կվերահաստատենք նաև մեր անժխտելի իրավունքները: Մոռացության տրված իրավունք մը, անտեսված իրավունք մըն է: Իսկ մենք հայերս երբեք մոռացության չպիտի տանք մեր իրավունքները և երբեք չպիտի արտոնենք, որ ուրիշներ զանոնք մոռացության տան:

Այս Քոնկրեսի գումարումը ոչ միայն վիա-

փաքելի ձեռնարկ մըն է, այլ ատկե՛ղատ ավելին է: Այս Քոնկրեսի գումարումը անհետաձգելի անհրաժեշտություն է: Հայկական հարցի լուծման տեսակետին: Անգամ մը որ հաջողինք մեռ դատը Միացյալ Ազգաց ուշադրության հանձնել և անոր օրակարգին վրա դնել, անգամ մը որ հաջողինք Հայկական հարցին դարձյալ այժմէական հարցի մը բնույթը տալ՝ զայն միջազգային նկատառության նյութ ընելով, այն ատեն մենք մեր պարտականության առաջին մասը լրացուցած կըլլանք: Այն ատեն մեր դատը դրած կըլլանք քաղաքական ավելի բարձր մակարդակի մը վրա, որովհետև մեր դատը չէ բնավ սոսկ պատմական շահագրգռություն ունեցող հարց մը, այլ ընդհակառակը անհրատապ այժմէականություն ունեցող դատ մըն է, որ դարերու խորքին հասած է մինչև մեր օրերը և արդարություն ու հատուցում կպահանջե:

Մեր դատը չէ բնավ հուսալքված և պատմության թատերաբեմին անհետացող ժողովրդի մը դատը: Մեր դատը անկող և զարգացող ժողովրդի մը դատն է:

Հայ ժողովուրդը հազարավոր տարիներու հոյակապ մշակույթ մը ունի իբրեւ իր ժառանգությունը: Ան քաղաքակրթության մակարդակին էր բարձրացրած երբ ուրիշ ցեղեր տակավին բարբարոսության շրջանին դուրս չէին եկած: Ան բազմիցս անգամներ ամբողջական բնաջնջման եզրը հասավ, բայց ամեն անգամին ալ փյունիկի նման հրաշափառ վերածնունդով մը արևին տակ իր տեղը դրավեց: Ան ամենասև օրերուն անգամ իր ձեռքին վար չձգեց լուսավորության ցահը և անսասան մնաց իր ըմբռնումներուն մեջ: Ան դիմադրավեց անհավատալի դժվարություններ և հաղթեց անոնց:

Եվ վերջապես այսօր մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը, անսահման կենսունակությամբ առկուն, հաստատ քայլերով կդիմե ղեպի իր խոստումնալից ապագան, վստահ իր ստեղծագործ կարողությանց գիտակցության մեջ, և վստահ թե Մերձավոր Արևելքի ճիշտ կեդրոնը, ինք մեծ առաքելություն մը ունի կատարելիք, իբրեւ խաղաղության և քաղաքակրթության ուխտյալ ռահվիրա և ջահակիր մը:

Հայկական հողային պահանջները, ուրեմն, այս Քոնկրեսի գլխավոր հարցն է: Բայց արտասահմանի հայությունը հետաքրքրող շարք մը ուրիշ հարցեր ևս կան: Ասոնցմե ամենեն կարևորը ներգաղթն է, որ սերտ և անմիջական կապ ունի հողային հարցին հետ:

Հայ ժողովուրդը դարերու ընթացքին հա-

ճախ դիմած էր գաղթի: Բայց այդ միշտ եղած էր արտագաղթի: Անտանեյի պայմաններին խուսափելով, հայրության մեկ մասը ձեռք առած էր պանդուխտի ցուպը և դիմած էր դեպի օտար հորիզոններ, հոն ապահովություն և բարօրություն գտնելու հույսով: Այդ արտագաղթող Հայոց մեջ երկարատեմն վառ մնացած էր օր մը հայրենիք վերադառնալու ակնկալությունը: Բայց տարիներու ընթացքին, օտար միջավայրի ազդեցությունը և Հայկական պետության գոյություն չունենալը ի վերջո պատճառ եղան, որ բազմամարդ գաղութներ իսպառ անհետանան:

Այժմ մեր պատմության մեջ առաջին անգամ ըլլալով հոսանքի ուղղությունը շրջված է. և արտագաղթի փոխարեն հանդիսատես և մասնակից կըլլանք ներգաղթի ոգևորիչ իրականության: Հայրենահավաքը, որու մասին մեր նախնիքը երազեցին, բայց տեսնելու բնիստը չունեցան, այսօր կիրառործվի:

Նրկու տարի առաջ, երբ զանգվածային ներգաղթի ավետիսը տրվեցավ, գաղթաշխարհի հայությունը ցնծությունը անսահման ձեռքով Գաղթաշխարհի հայությունը ուրախացավ սրտագին, որովհետև այլևս օրը հասած էր, երբ ան իր վրային պիտի թոթափեր օտարականի պատմութեանը և պիտի երթար իր երկիրը, Հայաստանի իր քույրերուն և եղբայրներուն հետ վերաշինելու համար մեր հայրենիքը:

Անցյալ տարի ավելի քանի 70 հազար հայեր վերադարձան Հայաստան Մերձավոր Արևելքի և Նվորդայի զանազան երկրներէն: Նույնքան թիվով հայեր այս տարի կներգաղթեն: Սովետական կառավարությունը ամեն կարելի միջոց կտրամադրէ ներգաղթի թափը արագացնելու համար: Իսկ Հայաստանի ժողովուրդը ամենամեծ նվիրվածությամբ լրծված է ներգաղթողներու ընդունելության աշխատանքներուն:

Այսօր արտասահմանի մեջ առնվազն հինգ հարյուր հազար հայեր կան, որոնք պատրաստ են և ցանկացող անմիջապէս Հայաստան երթալու, ի՞նչ բոլորի միաժամանակ ներգաղթելը հնարավոր ըլլար:

Արտասահմանի հայկական գաղութները արժեքավոր մասնակցություն բերին ներգաղթի կազմակերպման մեջ: Մասնավորաբար հայրենակցական ու բարեգործական կազմակերպությունները նոր աշխուժությամբ վերստանձնեցին իրենց սովանդական հայրենաշէն գործունեությունը: Բայց կասկած չկա, թէ շատ ավելին կարելի է ընել: Այս Քոնկրետի խորհրդակցություններն դուրս գալու են

գործնական թելադրություններ, ներգաղթի աշխատանքները համադրելու, արդունավորելու և արագացնելու համար:

Քոնկրետի նկատառության համար հառաջադրված երրորդ կետը Հայաստանի և գաղութներու միջև մշակութային և հոգեկան կապի զորացման հարցն է: Հայաստանի մեջ Սովետական իշխանության հաստատումին ի վեր բոլոր գաղութները զանազան ձևերով այդ կարգի կապեր պահած են Մայր երկրին հետ: Սակայն կարծիքներու և փորձառությանց փոխանակությունն անկասկած ցույց պիտի տա թէ այդ մարզին մեջ ևս բարելավման շատ ասպարեզ կա տակալին:

Քոնկրետի հառաջադրված օրակարգին վրա կա չորրորդ կետ մըն ալ: Հայտնի իրողություն մըն է, որ արտասահմանի մեջ հայերը զբաղեցան ոչ միայն իրենց առօրյա ապրուստը ճարելու և իրենց նյութական վիճակը բարելավելու հոգեբով, այլ և մասնակից եղան իրենց բնակած երկրներու քաղաքական, հասարակական և մշակութային կյանքին: Նրկու համաշխարհային պատերազմներու ընթացքին, մասնավոր Ռաշնակից և Միացյալ ազգաց զինվորական ճիգին, Հայոց բերած մասնակցությունը նկատելի դեր կատարեց, ինչպէս և Ֆաշիզմի կողմն ոտնակոխված ժողովուրդներու ազատագրական պայքարին բերած մասնակցությունը: Հայոց պատմագրությունը չի կրնար ամբողջական նկատվիլ, եթէ ան չպարունակէ սփյուռքի հայոց պատմությունը:

Այս խնդիրն անկասկած երկար և բազմակողմանի ուսումնասիրության կկարոտի: Սակայն հոս կրնանք առնվազն սկզբնական բայցերն առնել, և հետագա ավելի ամբողջական պատմագրության մը ուղղվածքը պատրաստել:

Նվ վերջապէս այս Քոնկրետը անորինելու է այն գործնական միջոցառումները, որոնցով Քոնկրետի տված որոշումները և եզրակացությունները կյանքի մեջ իրագործելու ջանք պիտի թափվի:

Սիրելի հայրենակիցներ,

Այս առաջին Համաշխարհային Հայկական Քոնկրետը գաղթաշխարհի Հայոց միասնականության և վճառականության մեկ տիրական արտահայտությունն է: Այս Քոնկրետի լայն ներկայացուցչական հիմքը անոր կուտա անժրիտելի իրավունք, բովանդակ գաղութահայության անունով խոսելու և անոր պահանջներն ու ցանկությունները ներկայացնելու:

Հոս համաքված են արտասահմանի բոլոր

Հայկական հայրենասիր կազմակերպությանը և համայնքներու պատգամավորները, որոնք կենդակացնեն հայ ժողովրդի այլազան խավերն ու հոսանքները, տեսակետներն ու գաղափարաբանությունները, բայց որոնք միացած են գլխավոր նպատակին շուրջ և անցիջող կերպով կ'աշխատեն, որ Ռեկտրնյան գործին մեջ պարփակված Հայկական նահանգները կցվին Սովետական Հայաստանին:

Համաշխարհային Հայկական Քոնկրետի գաղափարը և կազմակերպման աշխատանքները առնեն իսկ հայրենասիրության եռանդի և աշխոժովյան նոր ալիք բարձրացուցին արտասահմանի հայոց մեջ: Արդեն իսկ այս Քոնկրետի նախապատրաստությունները Հայկական հարցը համաշխարհային հանրային կարծիքի ուշադրության առարկա դարձուցին:

Մեր դատը արդար է, մեր պահանջները պետք է որ իրագործվին: Կալանավոր Մասիսի կապանքները պետք է որ փշրվին և հայ ժողովրդի անմահության այդ վեհափառ խորհրդանիշը պետք է որ ազատագրվի օտարի լուծեն: Անհիշատակ ժամանակներն էլ վեր

մեր նախնիներու քրտինով ռոգված և արյունով նվիրագործված Հայոց Հայրենիքի վրա պետք է որ վերահաստատվի հայ ժողովրդի հարազատ պետական իշխանությունը:

Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ և մեծ հայրենասեր Ռաֆֆին իր սրտի խորեն արձակեց հետևյալ մարգարեական ճիշդ, երբ Հայաստանի ազատագրումը տակավին շատ անհույս և հեռավոր կթվեր. —

«Արդյոք գալու՞ է մի օր, ժամանակ, Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ, եվ ամեն կողմից պանդուխտ հայորդիք Դիմեն դեպ յուրյանց սիրուն Հայրենիք»:

Մեծ բանաստեղծի և մեծ հայու մարգարեության երկրորդ մասը արդեն կիրականանա, — ամեն կողմից պանդուխտ հայորդիք դիմում են դեպ յուրյանց սիրուն Հայրենիք: Եվ մենք անխախտորեն համոզված ենք, որ շուտով գալու է այն օրն ու ժամանակը, երբ կտեսնենք Մասիսի գլխին մի դրոշակ իր ԱՄԲՈՂՋԱՑԱՍ ՀԱՅՐԵՆԻՔԻՄ, ՄԵՋ ՎԵՐԱՄՓՈՓՎԱՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՎ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԴՐՈՇԱԿԸ:

«Իրաքեր»

ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՆԹՈՑԱՆ

ԱՐԵՎԸ ՊԻՏԻ ԾԱԳԻ, ԱՐԵՎԸ ԱՐԴԵՆ ԾԱԳԱԾ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆԱՍՏԱՆԻ ԳՈՅՈՒԹՅԱՄԲ

Համաշխարհային Հայկական Քոնկրետի Հուսկ Բանկն արտասանեց Տ. Հմայակ վարդապետ Ինքույանը և վերջացուց հայրենասիրական մաղրաբնով մը: Հետևյալը այդ փակված ուղեծրի քննադիրն է:

Գերապատիվ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ Նղբայրներ,

Հարգելի Ատենապետ,

Հոգեկից Պատգամավորներ և Սրտակից Նղբայրներ ու Քույրեր,

Աշխարհի մեջ ամեն ինչ սկիզբ և վախճան մ'ունի: Համազգային Հայկական այս նվիրական ժողովն ալ այսօր իր լրոժին կհանգի, և դժբախտաբար ինձի վիճակված է կատարել ամենին տխուր և անբաղձալի պարտականությունը:

Տխուր և անբաղձալի, վախճանի երբեք պիտի չուղեի որ վերջանալու այս նվիրական գումարումը: Ոչ միայն անոր համար, որ այս շուրս օրվան ընթացքին խորապես ապրեցանք և սարսափեցինք մեր ազգային կյանքի պատմությունը իր բոլոր երեսներով, իր անուշ գերազանցություններն ու քառանկյուն դառնություններն,

բը, իր բոլոր հուսադրիչ և ջլատիչ հանգամանքներովը, իր անցյալի փառքովն ու դրժբախտությամբը, ներկայի վառ կյանքովը և ապագայի երազներովը, այնքան խանդավառությամբ պատկերված մեր միջին բանաստեղծներու ջիղ ու արյուն ապրումներու մեջն, այլ նաև անոր համար որ, որքան տեսնում է իրականացած մեր բոլորին՝ Հայության ցանկալի երազը, ազգային այս համագումարին հետապնդած նպատակը, այսինքն դարեր շարունակ մեր հոգեհատորներու, մեր բոլոր բյուրավոր նահատակներու արյունով կարմրած պատմական Հայրենիքի ազատու-

մը, մեր պապերու արյուն քրտինքով ոռոգված Հայաստանի կցումը վերադարձնող այժմու հորհրդային Հայաստանին, այնքան ատեն այսպիսի գումարումներ պիտի չբաղդին: Քանզի այնքան ատեն Հայուն միտքն ու հոգին պիտի ձգտին վերագտնել իրենց կորուստը, Մայր-Հայրենիքի ամբողջացումը:

Աշխարհի որ երկրին մեջ ալ գտնվինք, երկնքի որ հորիզոնին տակ ալ ապրինք, թե իսկ ամենեն նպաստավոր պայմաններու մեջ, նորեն պիտի ձգտինք մեր այս նպատակին, մեր Հայրենիքին:

Որքան ատեն չէ իրականացած հայուն բաղձանքը, որքան ատեն կապրի Հայը, այնքան ատեն գոյություն ունի Հայկական Դատը, որով և այնքան ատեն տեղի պիտի ունենան այսպիսի գումարումներ: Վասնզի ես այն խոր մտածողուն ունիմ, որ ամեն Հայ, որ նշույլի մը չափ գիտակցություն ունի իր ծագումին, իր իսկության, իր էության, վերջապես իր հայեցիության, պիտի սիրե իր հայրենիքը և ուզե անոր հասնիլ ի գին ամեն գոհողության:

Սիրելիներ, մի մոռնաք երբեք, որ ազգեր և ժողովուրդներ գիտակցությամբ և հոգիով կապրին, որքան ալ փոքր ըլլան անոնք: Որքան ալ մարդկային գազանային անիրավունքներ և վայրագության ենթարկվին, անոնք նորեն պիտի ապրին, վասնզի գիտակցություն ու ոգին անմահ են: Եվ պատմությունը կվկայե, որ ունինք այդ ոգին և գիտակցությունը: Եվ որքան ատեն տնինք այդ գիտակցությունն ու ոգին, այնքան ատեն անմահ ենք:

Նթե ապրեցանք 1915-ի մարդկային պատմության մեջ աննախընթաց սպանդին, կապրինք ասկե վերջն ալ: Մեր պատմությունը ինքնին մեծագույն գրավականն է այս ճշմարտության: Վերականգնացած մեր ներկա հորհրդային Հայաստանը, սփյուռքի վառ հայրությունը, ազգային այս համագումարը կրկին կուզան փաստել այս ճշմարտությունը:

Մեր սիրելիներու արյան մեջն մեզի փոխանցված այդ գիտակցության և ոգին հարազատ ծառանգորդներն ըլլանք: Մի տարակուսեք աննպաստ պայմաններն: Ընդհակառակը գորացեք, շրջողվեցեք: Մի հուսահատիք քաղաքական թոնուտ ամպրոպներէ, վասնզի, որքան ալ անտեսանելի, բայց ստուգորեն այդ թխպոտ ամպերու ետին կա սքըռը, որ անպայման պիտի ծագի մեզի համար ալ, և արդեն ծագած է հորհրդային Հայաստանի գոյությամբը:

Մական, գործածենք մեր գիտակցությունը,

նը, մեր ողջմտությունը ամեն պարագայի մեջ, մեր ազգային կյանքի մեջ և օտարներու նկատմամբ համասարապես: Չտարվինք մեր զգացումներն: Անտարակույս թե արդար է և թե իրավացի մեր պահանջը: Ո՛չ հայրենասիրությունը մեզդ է և ո՛չ ալ իրավունք պահանջելը հանցանք: Բայց, չափ դնենք մեր զգացումներուն և խանդավառության, ըլլանք խորագետ և շրջահայաց, համբերող և հեռատես:

Քրիստոնյա աշխարհը չի կրնար անտեսել մեր դատը եթե ո՛չ այսօր, անպայման վաղը: Վասնզի մեր դատին եկած ունէ անիրավություն նախատինք է նաև քրիստոնյա և քաղաքակրթված աշխարհին:

Ես, հանուն Քանատայի և Նիակարա Ֆոլսի հայության, սրտանց կողջունեմ բոլորիդ, մաղթելով այդ ոգին և գիտակցությունը, համազգային այս ժողովին աշխատանքներուն պսակումը և մեր արդար դատին լուծումը:

Փակման խոսքիս անցնելու առաջ բոլորիդ մասնավոր ուշադրության կհանձնեմ սա հրաշալի նկարին մանրամասնության հայտնաբերած գաղափարը^{*}): Թող ան անընչելի մնա մեր սրտերուն, հոգիներուն և մտքերուն մեջ. անհողորդ և վճռական քայլենք այդ հարացույցին, այդ խտեւրին, այդ նպատակին:

Առաջնորդյա՛ մեզ Տեր Աստուած մեր, և ուսո՛ւ մեզ գնալ ի ճանապարհոք քո արդարությունը, պահյա՛ ի խաղաղության ղկյանս մեր, զգնացս ի հաճույս քո:

Տեր Աստուած մեր, պահյա՛ զեկեղեցին Հայաստանյայց, զազգ համայն Հայոց, և զհորհրդային Հայրենիս մեր, և զմանկունս Թորգոմյան զարմին ի սփյուռս աշխարհի, ամբողջ և անխռով ի կամս ողորմության քո:

Հալածյա՛ զերևելի և զաներևույթ թշնամին ի սահմանաց մերոց և փրկյա զազգ մեր համայն ի փորձանաց:

Տո՛ւր զքո իմաստությունդ առաջնորդացն ազգաց, զի արդարությամբ տեսցեն զդատ Հայաստանյայցս:

Չորացո՛ւ ամբաստնոյալ զՄիություն Սովետական եղբայրության, և համայն մարդկության, զի Դու ես ամենազոր, օգնական և փրկիչ մեր. Ամեն:

«ԼՐԱՐԵՐ»

^{*} Խոսքը կվերաբերի Համաշխարհային Հայկական Փոնկրեսի առթիվ պատրաստված այն ցուցատախտակի նկարին, որուն մեջ Ուիլսոնը մատնանիչ կրնա Թրքական շղթայի մեջ անտված իր իսկ սահմանադժու երկրամասը և կրնա. — իկս հողամասը վերադարձուցեք իր օրինավոր տիրոջ — Հայկական Սովետական Հայաստանին:

ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆ. ԳԱՆՁԱՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍԲ

Որպես Համազգային Համաժողովի 700 պատգամավորներին մեկը՝ Նյու Յորքին մեկնելի առաջ՝ պարտք կզգամ տպավորություններուս դուզել մեկ մասը հանձնել ընթերցողներուս ուշադրության:

Ազգային նվիրական պարտք մը կատարած ըլլալու գոհունակությամբ կմեկնիմ հոսկե: Դար մը առհասարակ և սուղ գնով դնված: Լավ սկսանք, և կհուսամ լավ ալ կվերջացնենք: Մեր պարտքը լման կատարած կըլլանք այն բոլորին, երբ կարժանանանք ողջունել անոր արդար լուծումը: Մինչ այդ՝ մենք դեռ ընկելիք ունինք:

Ազգային միասնական և միջազգային օրինական բոլոր միջոցներով պիտի հետապնդենք մեր դատը սերնդե սերունդ, որովհետև ամեն մարդ գիտե, որ խնդիր մը կարելի չէ լուծված նկատել՝ մինչև շիտակ չէ լուծված:

Ամենքս գիտենք և աշխատինք մեր բարեկամներին ալ վստահեցնել, որ մենք ո՛չ ոքին իրավունքը կուզենք խլել, ո՛չ ոքին բուռ մը հաց և ափ մը հող կուզենք մոլորալ, այլ մենք կազենք միայն, մերը՝ շահված մեր պապերու ճակտի քրտինքով և մտքի արդունքով, նվիրականացած՝ միլիոնավոր նահատակներու արյունով, պողպատված հայ բազմներու հզորագոր հարվածներով, վերջապես ճանջված միջազգային օրենքներով: Մենք այդ կուզենք:

Հաղթանակի հույսը անխորտակ է մեր մեջ: Մենե աղեկներն ինկան պայքարի ճամբուն վրա, մենք անցանք անոնց տեղը, թերևս քենք ալ իյնանք, այն ատեն մեզ կհաջորդեն մեր զավակները: Եվ այսպես պայքարը կսկսե սերունդե սերունդ՝ մինչև ժամկետ, մինչև հայ դատի արդար լուծումը: Մեր պապերու հավատը անխորտակ է մեր մեջ, Ծանրաշունչ Տալիթս, Արարտուն Թաման հավերժական կոթողներն են մեր հավատքին: Միշտ շարժուն, միշտ արթուն:

Կա՛ր մեր մեջ թերահավատ մը, որ խորհեր թե այս ազգը միություն չունի: Եթե կար այդպես մեկը երեկ, թող դար և տեսներ մեր Համաժողովը: Իսկապես Համաշխարհային, իսկապես միասնական:

1945 մայիս-հունիսին Համազգային ճակատը նվիրագործվեցաւ էջմիածնա Մայր Տաճարին մեջ: Ես զայն տեսա: Պատմական անկյունադարձ մըն էր այն, ուր Հայ Նկեղե-

ցիներու Աթոռները Սիրո և Միութեան Նոր Ուխտ կերտեցին:

Ինչ ծածկեմ մեղքս, ես հոն հավատալոր մանուկի մը նման արտասվեցի: Հուզումի և ուրախության արցունքներ, որոնք կրխելն հերոս ընկերներուս, մարտիրոսացած ծնողքիս, անհաց և անջուր ինկող զավակներուս անմահական գանգերն: Ես անոնց և իմ բախտավոր աչքերովս դիտեցի Հայրապետական վեղարի Խաչն Աղամանդլա՝ աղեղված որպես ծիածան Անոր կուրծքին վերև շողացող հերոսական շքանշանին հետ ոսկեղեն: Դիտեցի ու չհագեցաւ և լացի: Մենք հոն անբաժանելի ազգ դարձանք, մեկ կուրծքով, մեկ ճակատով, Մասիսն ու Արազածը անամայ, Սովետ եղբայրության ձեռքին տակ: Ո՛վ չուրախանար ասոր:

Անոր երկրորդ պատկերն էր Նյու Յորքի Համաժողովը: Ես հոդ ալ լացի:

Ես այս ժողովին մեջ մաքղեք շտեպս, այլ ՄԱՐԴ տեսա: Հոս ալ մարդիկ միացած մեկ ճակատով, մեկ կուրծքով: Ողջուն Հայ Միութեան: Մեր դատի հիմն է այն:

Բեմին վրա բազմած, ես համեստ հայ հոգևորական մը, աջ կողմս Հիբանանի պատգամավորը, ձախ կողմս Եթովպիան, լսեցի իրարու հետ կխոսեին, ծովածավալ բազմութենեն արբշիւ:

«Հազարավոր մղոններ կտրեցինք այս օրվան համար, այս ժամուն համար և հիմա երջանիկ ենք: Մենք կխորհենք թե ամերիկահայությունը այս երկրին մեջ շատոնց մոռցած պետք էր ըլլար հայ լեզուն, հայ դատը և հայ ազգը»:

«Շրաշք է աս,—կըսեր անոնցմե մին: Այս ի՛նչ խանդ, այս ի՛նչ եռանդ հայ դեմքերու վրա: Հին սերունդը նորին, բողոքականը լուսավորչականին, եկեղեցիները հայրենակցականներուն հետ կմրցին: Մեկ ճակատ, մեկ կուրծք: Այս ազգը չի մեռնիր: Մեր դատը շահված է»:

Ո՛վ չուրախանար ասոր:

Եղեմեն Լոս Անճելոս ճամբուս վրա բարեկամներես մին տեսա, որ այս ձեռնարկին հավատացող էր, սակայն կպնդեր՝ թե պետք է հետաձգել, մինչև որ մեր դատին համար նպաստավոր պայմաններ ստեղծվին:

Այդպես խորհողներ ուրիշներ ալ կան,—կըսեմ:

Ճիշտ է, տակավին խաղաղության հորիզոնին վրա սև ամպեր կուտակված են և

նույնիսկ մեր կառավարությունը, Միացյալ Նահանգացի կառավարությունը, իհարկե այս երկրին շահեր են մղված, մեր բաղձանքի հունին մեջ չէ: Ո՞վ չգիտեր ասոնք:

Բայց ո՞վ կրնա ըսել մեզ, թե ե՞րբ պիտի պայծառանա հորիզոնը և ե՞րբ դեպքերը դասավորված պիտի դառնան համաձայն մեր բաղձանքին:

Ի՞նչ լավ կըլլար, որ մարդիկ և մարդոց առաջնորդները, այսօր բոլորովին ձեռքադառնալով մասնավոր շահադիտություններ, տոգորված Աբրահամ Լինքոլնի համամարդկային շունչով, Ուիլսոնյան արդարությանը, Ճեֆերսոնի շունչով և Ռուզվելտի Ատլանտյան հրովարտակի ոգով՝ եղբայրաբար հավաքվեին խաղաղության կտր սեղանին շուրջ, դասավորեին դույներու և ազգերու հավասար իրավունքը: Աշխարհի խաղաղություն և մարդոց հաճություն բերեին: Այո՛, ընեին այս բոլորը և մեզ ալ շնոհային: Բայց ըսեք, ե՞րբ: Եվ եթե այսօր է այդ օրը, ո՞վ կրնա և ի՞նչով կրնա մեղադրել մեզ, երբ

մենք այդ է, որ կուգնեք: Թող թուրքն ալ ապրի, քուրտն ալ ապրի, բայց մենք ալ ապրինք:

Մեր դատին քաղաքական հորիզոնի աստղերը բոլորովին կմարին և մեր այդ բաղձալի օրը երբեք ալ չհասնիր, երբ այսօր յուրաքանչյուր ազգ կվազե իր շահուն փտեն և մենք աչքերնիս փակած, ձեռներնիս ծոցը, նպաստավոր օր երազենք:

Ո՛չ, բարեկամներ, ո՛չ: Մեր դատին քաղաքական հորիզոնը համեմատական է մեր դատի լուծման անհերքելի և արդար պահանջին: Եվ նյու Յորքի Համագումարը, այդ ժամկետը, կարևոր հանգրվաններ են մին էր և կհուսամ ժամկետի վերջին կամ վերջնափեր կայանն է այն:

Սուրբ Գրոց մեջ հիշված անիրավ դատավոր մը վերջապես լսեց այրի կնոջ թախանձանքը, գոնե իր հանգիստին համար: Մեր պարագային ո՛չ մենք այսօր այրի կին ենք, ո՛չ ալ մեր դատավորներն անիրավ: Մեր դատը լավ ձեռքերու մեջ է:

«Լրաբեր»

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Համաշխարհային Հայկական Կոնգրեսի աշխատանքները լրիվ ընդգրկող նյութեր խմբագրությունն իր տրա-

մագրության տակ չի ունեցել, ուստի բավականացել է միայն իր ձեռքի տակ եղած նյութերով:

